

Անուն----- Թուական-----

«Կոմիտաս»

Բառագիտութիւն

Շրջագծէ՛ ճիշդ պատասխանները:

1-Նուագով զբաղող անձ:

Ա-երաժշտութիւն Բ-երաժիշտ Գ-նուագ

2-Եկեղեցական մարդուն կ'ըսենք հոգեւորական եւ...

Ա-երաժիշտ Բ-շուրջառ Գ-կրօնաւոր

3-Գործիք մը, որ փչելով կը նուագենք:

Ա-սազ Բ-սրինգ Գ-դափ

4-Ի՞նչ է երաժշտութիւնը:

Ա-նուագ Բ-երգ Գ-պար

5-Թուրքը հայուն ջարդեց, կողոպտեց, տեղահան ըրաւ եւ...

Ա-հողեր տուաւ Բ-պաշտպանեց Գ-աքսորեց

6-Մարդիկ իրենց մտքին մէջ կը ներկայացնէին ու կ'երեւակայէին:

Ա-կը խօսէին Բ-կը պատկերացնէին Գ-կը գծէին

7-Մեռնողին ոսկորները ի՞նչ կը կոչուին:

Ա-աճիւն Բ-միս Գ-հող

8-Գիտութեան եւ արուեստի մրցումին ի՞նչ կ'ըսենք:

Ա-տօնահանդէս Բ-մրցանք Գ-գիտարուեստ

9-Տարազը ի՞նչ բանի տեսակ է:

Ա-խաղի Բ-պատկերի Գ-զգեստի

10-Գալիք օրերուն հրթիռով կը փափաքիմ տիեզերք ճամբորդել:

Ա-ապագային Բ-ներկայիս Գ-անցեալին

Նախադասութիւնները ամբողջացո՛ւր յարմար բառերով:

Սրինգ – երաժիշտ – երաժշտութիւն – կրօնաւոր – զգեստ – աքսորեց –
յաճախ – աճիւն – կը պատկերացնէին – զբօսայգի

1-Ուսուցիչը ըսաւ, թէ Կոմիտաս մեծ ----- Էր եւ հիանալի կերպով
-----կը նուագէր:

2-Դպրոցին մէջ մեր հագած -----ները կը կոչուին համազգեստ:

3-----Կիրակի առաւօտները մարզադաշտ կ'երթանք խաղալու:

4-Թուրք կառավարութիւնը գրաւեց հայերուն հողերը եւ ժողովուրդը-----
այդ քաղաքներէն եւ գիւղերէն:

5-Դասարանին մէջ երբեմն մեղմ -----մտիկ կ'ընենք:

6-Հայ -----ները կը հագնին մուշ գոյնով երկար զգեստներ:

7-Երեխաներու գծագրութիւնները -----կեանքը
լուսնին վրայ:

8-Հայրս մեծ հօրս -----ները Հայաստան փոխադրեց, որովհետեւ
այդպէս փափաքած էր:

9-Փոքրիկները շատ կը սիրեն ----- երթալ ու ազատ խաղալ:

Պարբերութիւն մը գրէ՛ վերոյիշեալ բառերէն միայն հինգը գործածելով:

